ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ-իրանական բազմադարյան հարաբերությունների ընթացքում հայերենը զգալի ազդեցություն է կրել իրանական լեզուներից։ Այս փաստի գերագնահատումը համեմատական լեզվաբանության զարգացման սկզբնական շրջանում հանգեցրել է նույնիսկ հայերենը իրանական լեզու համարելու ոչ ճիշտ տեսակետին։ Միայն անցյալ դարի վերջին քառորդից հաստատապես ժխտվեց այդ տեսակետը և հայերենը դիտվեց հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ։ Բնականաբար, հայոց լեզվում գործառող իրանական բառերն էլ դիտվեցին փոխառություններ։

Հայոց լեզուն իր գոյության հազարամյակների ընթացքում բառեր է փոխառել հին և նոր լեզուներից։ Իրանական լեզուներից կատարվածները թվով ամենաշատն են (ըստ Աճառյանի հաշվումների՝ 1405 բառ)։ Դա պայմանավորված է վաղնջական ժամանակներից սկսած հայ-իրանական հարաբերություններով, երկու ժողովուրդների քաղաքական-տնտեսական, մշակութային կյանքի առանձնահատուկ աղերսներով։ Իրանական ծագմամբ բազմաթիվ բառեր հայ մատենագրության սկզբնավորման շրջանից՝ V դարից արդեն ընկալվում էին որպես հայերեն բառեր, նշանակում է նրանց մեծ մասը հայերենին է անցել նախագրային ավելի վաղ շրջանից։ Կարելի է առանձնացնել փոխառություններ իրանական լեզուների բոլոր շրջաններից՝ հին իրանական (մ. թ. ա. II հազ. սկիզբ—մ. թ. ա. IV—III դդ.), միջին իրանական (մ. թ. ա. IV—III դդ.—մ. թ. VIII—IX դդ.) և նոր իրանական (մ. թ. IX—X դդ. սկսած)։

Ականավոր հայագետներ Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, Է. Բենվենիստը զգալի ավանդ ներդրեցին հայերենի իրանական փոխառությունների ուսումնասիրության բնագավառում։ Հ. Աճառյանը, ամփոփելով և ի մի բերելով նշված և նախորդ այլ ուսումնասիրողների և իր երկարամյա պրպտումների արդյունքները, արմատական բառարանում ներկայացրել է իրանական ծագում ունեցող բառերը, նշելով աղբյուրները, ինչպես նաև եղած ստուգաբանական հիմնական փորձերը։ Այդ նյութի վրա էլ մեծավաստակ գիտնականը իր «Հայոց լեզվի պատմության»[1] մեջ քննել է հայերենի իրանական փոխառությունները։

Թե՛ արտասահմանում և թե՛ մեզանում կատարվել և կատարվում են հայ-իրանական լեզվական առնչություններին վերաբերող ուսումնասիրություններ։ Համարյա բոլոր հայագետները այս կամ այն առիթով անդրադարձել են իրանական փոխառություններին (Բեյլի, Հենինգ, Սեմիրենյի...)։ Հյուբշմանից հետո այդ գործում մեծ է հատկապես Ա. Մեյեի[2] և Է. Բենվենիստի[3] վաստակը։ Հայագիտության մեջ լուրջ ներդրում է իտալացի լեզվաբան Ջ. Բոլոնիեզիի ուսումնասիրությունը[4], որտեղ հեղինակը մատնանշում է հայերենում իրանական փոխառությունների բարբառային աղբյուրները, բացահայտում իրանա-

---

[1] *Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. I մաս, Երևան, 1940, էջ 218—323։ Այս գրքում զետեղված է նաև փոխառյալ բառերի ցանկը, որի մասին խոսք կլինի մեր հետագա շարադրանքում։*

[2] *Ա. Մեյե. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978։*

[3] E. Benveniste. Mots d'emprunt iraniens en arménien.—„Bulletin de la Société linguistique de Paris". T. 53, Paris, 1958. Idem. Eléments parthes en arménien.—„Revue des etudes arméniennes". I, 1964 (REA).

[4] G. Bolognesi. Le fonti dialettali degli imprestiti iranici in armeno. Milano, 1960.

կան այս կամ այն լեզվից կամ բարբառից հայերենին անցած բառաձևերի հնչյունական որոշ օրինաչափություններ։ Հնչյունական-հնչյունափոխական օրինաչափությունների, հայ-իրանական բազմաթիվ տերմինների ընդհանրության և այլ հարակից հարցեր են շոշափվում Ա. Փերիխանյանի աշխատություններում[5]։ Մ. Անդրոնիկաշվիլու գրքում V—XV դդ. վրաց մատենագրության տվյալների հիման վրա քննվում են վրացերենի իրանական փոխառությունները[6]։ Այս աշխատության մեջ զգալի տեղ է հատկացված նաև հայերենի իրանական փոխառություններին։ Ուշագրավ է հատկապես գրքի երկրորդ գլուխը, որտեղ քննված են պարթևական ծագում ունեցող բառերը, որոնց մի զգալի մասը վրացերենին է անցել հայերենի միջոցով։

Գ. Ջահուկյանի և Է. Աղայանի գիտական վաստակը այս բնագավառում ներկայանում է մի շարք ստուգաբանություններով, որոնք առանձին բառերի մասնակի վերլուծություն լինելուց զատ, ունեն նաև, ընդհանրապես, հայ-իրանական լեզվական աղերսները գիտականորեն լուսաբանող արժեք[7]։

Վերոհիշյալ ուսումնասիրողների նպատակներից դուրս են եղել փոխառյալ բառերի տարբեր կարգի դասակարգումների, փոխառյալ բառերի տարբերակման սկզբունքների հարցերը, որոնք շոշափվում են մեր հոդվածում։ Այս տեսանկյունից առանձնանում է Հ. Աճառյանի ուսումնասիրությունը։ Բնականաբար մեր որոշ դիտողություններն ու նկատառումները վերաբերում են հիմնականում Հ. Աճառյանի աշխատություններին։

Առայժմ հստակ չափանիշներ չկան տարբերակելու բոլոր այն բառերը, որոնք անմիջաբար հայերենը փոխառել է հին իրանական լեզուներից (աքեմենյան շրջան և ավելի վաղ)։ Հստակ է այն, որ հայ-իրանական ամենասերտ առնչությունները (այդ թվում և լեզվական) եղել են միջին իրանական լեզուների շրջանում։

Հայերենի՝ իրանական ծագում վերագրվող բառերի զգալի մասը ստուգապես ապացուցված է, բացահայտված են որոշ հնչյունախմբեր, որոնք անկասկած բնորոշ են իրանական լեզուներին։ Բայց հարցը դեռևս սպառված չպետք է համարել։ Առկա հարուստ նյութը առաջադրում է նոր հարցադրումներ, քննության նոր եղանակներ ու սկզբունքներ։ Երբեմն հստակորեն չեն տարորոշվում արմատի ծագման և տվյալ արմատով կազմված նոր բառի փոխառյալ միավոր դիտելու չափանիշները։ Եթե այս կամ այն բառը (կամ արմատը) իրանական է, ապա լեզուն կարող է այդ արմատով ստեղծել նոր բառեր։ Այս դեպքում դրանք չպետք է փոխառյալ բառեր հաշվել (մանավանդ երբ դրանք չկան փոխատու լեզվում կամ՝ ավանդված չեն)։ Այսպես, արմատական բառարանում իրավացիորեն գոյշ և ոյժ բառերը իրանական են համարվում։ Միաժամանակ փոխառյալ միավորներ են համարվում զգոյշ և ժոյժ բառերը։ Այո՛ զգոյշ-ի և ժոյժ-ի արմատները իրանական են, բայց դրանք հայակազմություններ են արդեն։ Իրանականից վերցրած գոյշ բառից հայերենը կազմել է նոր բառ՝ զ+գոյշ, իսկ ոյժ արմատից՝ զ+ոյժ>ժոյժ։ Նման դեպքերում արմատի ծագումը իրավունք չի տալիս բառն էլ օտար փոխառություն համարելու։ Այսպիսի օրինակներ շատ կան։ Խնդիրը ավելի է դժվարանում բայերի քննության

---

[5] А. Периханян. К вопросу о рабовладении и землевладении в Иране парфянского времени.—«Вестник древней истории», 1952, № 4 (ВДИ); Она же. Агнатические группы в древнем Иране.—ВДИ, 1968, № 3. Eadem. Notes sur le lexique iranien et Arménién.—REA, V, 1968. Eadem. Sur arm. panduxt.—REA, VI, 1969.

[6] მ. ანდრონიკაშვილი, ნარკვევები ირანულ-ქართული ენობრივი ურთიერთობიდან, ტ. I, თბ. 1966 (Մ. Անդրոնիկաշվիլի. Ակնարկներ իրանա-վրացական լեզվական փոխհարաբերությունների. Թբիլիսի, 1966)։

[7] Տե՛ս Г. Джаукян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967. Գ. Ջահուկյան. Հայ-իրանական զուգադիպումներ («Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 2, էջ 21—29)։ Նույնի՝ տարբեր գրքերում ու հանդեսներում սպառված ստուգաբանությունները։ Է. Աղայան. Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ. Երևան, 1974։

ժամանակ։ Իրանական լեզուներից կատարված փոխառությունների ցանկում կա 57 բայ։ Ինչպես տեսնում ենք բավական մեծ թիվ։ Որպես փոխառյալ միավորներ սրանք արդյո՞ք նույնական են փոխառյալ անվանական բառերի կամ արմատների հետ։ Անշուշտ, ո՛չ։ Հենց միայն ել(իլ) երբեմն նաև՝ ալ լծորդությունները վկայում են այդ բառերում հայերենի տարրերի գոյության մասին։ Իր արժեքավոր մի հոդվածում[8] պրոֆ. Ա. Աբրահամյանը որոշ պարզաբանում է մտցնում հարցի մեջ։ Նա նկատում է, որ սխալ կլինի կարծել, թե բայերը ամբողջական բառական փոխառություններ են...։ Հայերենի բայական մասնիկավորումը, իբրև քերականական բայակազմական մի ընդհանուր երևույթ, հայերենի համար իր հատուկ դրսևորումներով չէր կարող տառացիորեն նույնանալ սովորական փոխառության հետ[9]։ Ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, բայական փոխառությունների դեպքում փոխ է առնվում ոչ թե փոխատու լեզվի ամբողջական բայական բառույթը, այլ՝ բայական հիմնական ձևույթը իր իմաստով և հայերենում ձևավորվում է հայերենին հատուկ մասնիկավորմամբ։ Հոդվածի հեղինակը սա համարում է վերակազմական փոխառություն կամ լեզվաքերականական փոխակարգում[10]։

Ինչ վերաբերում է իրանական ծագմամբ բայերին, ապա միշտ չէ, որ հնարավոր է պարզել, թե բայը (իր իմաստով) փոխառյա՞լ է, թե՞ համապատասխան արմատից հայերենը կերտել է նոր բառ։ Օրինակ հրամայեմ բայը ամենայն հավանականությամբ փոխառված է պհլ. framāyēm ձևից։ Հրաման գոյականից լինելու դեպքում կլիներ *հրամանեմ։ Իսկ արժեմ, նիրհեմ, վիրամ բայերի համար նույն բանը հաստատապես չենք կարող պնդել։ Ինչպես նշել ենք, փոխառյալ բառերի ցանկում բերված է 57 բայ։ Այստեղ դարձյալ միասնական սկզբունք չի կիրառվում։ Ինչո՞ւ, ասենք, նկարեմ բայը չկա, իսկ պահեմ-ը կա։ Այսպիսիները եզակի չեն։ 57 բայերից 12-ը (բազմիլ, դիտել...) բերված են համապատասխան անվանական փոխառությունների հետ՝ մեկ թվահամարի տակ, այսինքն՝ բայական ձևը չի մեծացնում փոխառություննեըի թվական կազմը։ 9 բայ (արժել... ճարակել... յիշել...) բերված են անվանական բառերից զատ՝ տարբեր թվահամարների տակ, այսինքն՝ բայական ձևերն այս դեպքում ավելացնում են փոխառյալ բառերի թիվը։

Մեր կարծիքով, փոխառյալ բառերի ցանկում բայական ձևերի նշելը ճիշտ մոտեցում չէ։ Թերևս պետք է նշվեն միայն այն բայերը, որոնք հաստատապես անվանական ձևից անկախ հայերենին են անցել փոխատու լեզվից։

Փոխառությունների շարքում բացի ել(ալ)- լծորդությունից հանդիպում ենք նաև այնպիսի բայերի, որոնց մեջ առկա են հայերենին բնորոշ այլ ձևույթներ։ Բերենք օրինակներ. զարգանալ։ Արմատն է արգ-ը, որը իրանական է, իսկ զ-ն, ան-ը, ալ-ը հայերենի ձևույթներ են։ Էլ ինչո՞ւ պիտի բառը փոխառություն համարել։ Կամ՝ ունենք արկանել, բաժանել բայերը։ Փոխառյալ լինելու դեպքում սպասելի էր թերևս *բաժել, *արկել... Ապաշխարել-ի մեջ ար-ը նույնպես հայկական է. հմմտ. մեծ-ար-ել (արմատն է arāxš-ը)։ Այս կարգի բառերը, մեր կարծիքով, չպետք է փոխառություններ համարվեն, սրանք փոխառյալ արմատով բայակազմություններ են, հայերեն բառեր։

Հայերենն ունի իրանական ծագմամբ մի շարք բառեր ու արմատներ, որոնք անկախաբար չեն կիրառվում. հմմտ. աշխատ (առնել), ժէտ, ձեշմակ (ապաշտ), պատկան (դարան), խազ «քար» (գայլախազ), շատ (Արտաշատ, Այգիշատ) և այլն։ Ընդգծվածները գործառական ինքնուրույն միավորներ չեն և պարզ է, զգալապես տարբերվում են անկախաբար գործածվող բառերից։ Մյուս կողմից, այս բառերով կազմված բարդությունները (եթե բարդության բաղադրիչները իրանական չեն և բարդությունը ամբողջապես փոխառյալ չէ)

---

8 Ա. Ա. Աբրահամյան. Փոխառությունների հետ կապված բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8։

9 Նույն տեղում, էջ 116։

10 Նույն տեղում։

նույնպես պետք է տարբերակել իսկական փոխառություններից։ Այսպես, հրաման և հրամայեմ-ի՝ որպես առանձին փոխառյալ միավորների կողքին բերվում է նաև հրամանատար-ը, որի պհլ. ձևը iramatar-ն է։ Բարդությունը իրանական լինելու դեպքում սպասելի էր *հրամատար, իսկ հրաման—(ա)-տար-ը, թերևս, հայակազմություն է։ Բարդության մեկ բաղադրիչը հայերեն է սորակալ բառում։ Պհլ. stor+կալ։ Ասենք, որ այս բառերը նույնպես զետեղված են փոխառյալ բառերի ցանկում, որոնք դարձյալ արհեստականորեն մեծացնում են փոխառությունների թիվը։

Ուշադրություն դարձնենք մեկ այլ հանգամանքի վրա։ Իրանական ծագում ունեցող բառերը հայերենում կազմում են նաև համանունների շարքեր։ Համանուն միավորները նույնպես դիտվում են առանձին փոխառություններ։ Բայց պետք է ասել, որ այս սկզբունքը միշտ չի արդարացվում։ Բերենք երկու օրինակ. Անարի «անճոռնի, վիթխարի» բառը արմատական բառարանում դիտվում է իրանական փոխառություն՝ կապվելով anairya, պհլ. anēr «ոչ-արիական, օտար» բառի հետ։ Այս կապը բացատրվում է հետևյալ կերպ. «Աղգերը սովորություն ունեին իրենցից դուրս գտնվող ազգերին «վայրենի, բարբարոս, այլանդակ» համարելու և նրանց անունը այս նշանակությամբ կամ ուրիշ վատ իմաստով իբրև ածական գործածելու. հմմտ. հայերենում խուժիկ, խուժան, խուժադուժ, խաղտալուր...»։

Ասենք, որ ոմանք բառը իրանական չեն համարում։ Ըստ Գ. Ղափանցյանի «հայոց անարի բառը ածանցված է anar բառից ı վերջածանցով, ինչպես ալի, Երկաթի, ջրի, ճայազգի և այլն։ Իսկ anar-ը փոքրասիական մի բառ է «հզորություն» իմաստով, որից կան բազմաթիվ ածանցյալներ, ինչպես ınarahh- «հզորացնել», ınnarawes «հզորանալ» և այլն... իսկ «հզոր» իմաստը հեշտությամբ կարող է հասկացվել և իբրև «չափազանց մեծ»։ Այդ անարի ածականով Եզնիկը հորջորջում է ծովի ձկներին, կամ Խորենացին «Նիզակ անարի ի ձեռին իւրում», ուր խոսվում է Հայկի հզոր նիզակի մասին»[11]։

Եթե ճիշտ է Ղափանցյանի մեկնությունը, ուրեմն բառը իրանական ծագում չունի, իսկ եթե արմատը իրոք իրանական է, ապա այս դեպքում էլ անարի-ն նոր փոխառյալ միավոր չպետք է համարել։ Սա արդեն նոր բառ է, նոր իմաստով, որը կա միայն հայերենում, ուրեմն և այն հայերեն բառ է։ Բազուկ «ճակնդեղ» բառն էլ նույնպես իրանական է համարվում՝ բազուկ «ձեռք» պհլ. bazu «ձեռք» բառից. «նույն բառն է, որ հատկացված է այս բույսին, իր երկար թևերի պատճառով»։ Սա արմատական բառարանում եղած մեկնությունն է։ Ասենք, որ բազուկ «ճակնդեղ» բառի իրանական ծագումը որոշ ուսումնասիրողներ մերժում են, բառը կապելով baz արմատի հետ՝ -ուկ- մասնիկով (վերջինիս հանդիպում ենք մի շարք բուսանուններում։ Հմմտ. գնձմնձուկ, պասպատուկ և այլն)[12]։ Այս դեպքում էլ բառի միջնորդավորված ծագման հարցը էական չէ։ Անկախ բազուկ «ձեռք» և բազուկ «ճակնդեղ», ըստ ՆՀԲ-ի նաև «ոստ, ուռ, ճյուղ...», բառերի ծագման աղբյուրից ու դրանց կապից, բազուկ (II)-ը հայերեն բառ է. այդ իմաստը ստեղծել է հայերենը։ Դա բազուկ (I)-ի բազմիմաստության արտահայտություն չէ, այլ բոլորովին նոր իմաստ։ Ուրեմն, ճիշտ չէ այս կարգի համանունները իրանական փոխառություններ համարելու սկզբունքը։

Կան դեպքեր, երբ այս կամ այն հեղինակը գործածում է պարսկերեն բառը՝ տալով նրա մեկնությունը, թարգմանությունը։ Որպես կանոն այդ բառերը կիրառված են մեկ-երկու անգամ։ Բայց անկախ հաճախականությունից, դրանք նույնպես փոխառություններ չպետք է համարել։ Բերենք մեկ օրինակ։ Տարա—

---

11 Գ. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1961, էջ 162։

12 Гр. Капанцян. Хайаса—колыбель армян. Ереван, 1947, с. 45.

զուկ բառին հանդիպում ենք Շիրակացու մոտ, համաստեղությունների՝ տարբեր լեզուներում ունեցած անվանումների թվարկման ժամանակ. «Խումբք աստեղատանցդ... հարկաւորիմ զնոյն անուանս յիշել՝ զոր յետ Քաղդէացւոց կոչեն Յոյնք, Հայք, Պարսք: Յոյնք Կռիոս, Հայք Խոյ, Պարսք Վարբակ... (Յոյնք) Ձիգոս, (Հայք) Կշիռ, (պարսք) տարազուկ»[13]: Համատեքստից զգացվում է, որ ընդգծվածը իրանական փոխառություն չէ, այլ պարսկերեն բառ-անվանում: Ուրեմն, այս և այդ կարգի բոլոր բառերը (աթաշ, գուրգասար, նեմռոզ)[14] պետք է հանել փոխառյալ բառերի ցանկից:

Առարկելի է նաև այն սկզբունքը, երբ որոշ աղավաղված կամ հայերենի հնչյունական օրենքներով փոփոխությունների ենթարկված բառերը իրանական են համարվում: Անժխտելի է, որ հյ. ահոկ «հանցանք, վնաս» բառը պհլ. ahōk «թերություն, պակասություն»-ն է: Արմատական բառարանում և փոխառյալ բառերի ցանկում որպես իրանական փոխառություն է դիտվում ընդամենը մեկ անգամ գործածված աֆոկ «վատ, վնաս» բառը: Եթե աֆոկ ձևը հայերենին անցած լիներ իրանական որևէ լեզվից կամ բարբառից, այս դեպքում առարկություն չէր լինի[15]: Այստեղ առկա է հայերենի որոշ բարբառներում գործող հ>ֆ հնչյունափոխությունը. համմտ. հող>ֆող, հոտ>ֆոտ և այլն: Անաշանիկ-ը անաշխարհիկ-ի սխալագրությունն է: Նկատենք, որ անաշանիկ-ը կիրառված է լոկ մեկ անգամ: Ապիմակ-ը մեկ անգամ գործածել է Եզնիկը. «Զորդիս կամ զծառայս յապիմակս և ստահակս յօժարեցուցանիցեն հանել»: Ընդգծվածը, ինչպես նկատել է Վարդանյանը, ապիկամ բառի աղավաղումն է[16]: Այս կարգի օրինակների թիվը կարելի է շարունակել:

Ընդհանրապես, հայ-իրանական լեզվական առնչություններին վերաբերող հիմնական աշխատություններում նկատելի է իրանական փոխառությունների քանակական կողմի արհեստական ուռճացման միտում: Ո՞րն էր դրա պատճառը: Ինչպես գիտենք, գիտության մեջ երկար ժամանակ տիրապետող է եղել այն կարծիքը, ըստ որի հայերենը իրանական լեզու էր[17]: Միայն անցյալ դարի վերջին քառորդից, ավելի կոնկրետ՝ 1875 թ.[18], ականավոր հայագետ Հյուբշմանի աշխատություններով հիմնավորվեց հայերենի ինքնուրույն լեզվաճյուղ լինելու փաստը: Քանի որ փոխառությունների թիվը չէր կարող կարևոր փաստարկ լինել հայոց լեզվի ինքնուրույն կամ իրանական լեզվաճյուղ լինելու հարցում, բնականաբար, ուսումնասիրողները փոխառությունների հարցում ավելի քան ազատ էին վարվում: Վերը արդեն նշել ենք որոշ վիճելի սկզբունքների մասին, բերել ենք օրինակներ: Անդրադառնանք այլ դեպքերի: Կան բառեր, որոնց փոխառության աղբյուրը ստուգապես հայտնի չէ: Օրինակ, սանդալ, մուրտ բառերը հայերենին են անցել կամ հունարենից կամ իրանական լեզուներից պհլ. *sandal, հուն. σάνδαλον, պհլ. mūrt, հուն. μύρτος, կապադ. μούρτο, լտ. myrtus...: Նիշ-ը ենթադրվում է պհլ. *niš ձևից: Ոմանք նիշ-ը կապում են ասոր. niša «նշան, դրոշ», եբր. nēs «նշան»... բառերի

---

13 Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից. Ս. Պետերբուրգ, 1877, էջ 62:

14 Տե՛ս Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Իրանական փոխառություններ համարվող մի քանի բառերի շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 258—259:

15 Ռուսերենում նույնպես նույն բառի տարբեր ձևերը դիտվում են փոխառություններ, երբ նրանք ենթադրում են փոխառության տարբեր աղբյուրներ. օրինակներ. амнистия—амнестия (լեհ. amnistya, հուն. amnestya), артиллерия—артилерия (լեհ. artylerya, ֆր. artillerie). Տե՛ս Н. И. Г а й н у л и н а. Заимствованная лексика в „Письмах и бумагах императора Петра Великого». Алма-Ата, 1973, с. 52.

16 Տե՛ս «Հանդես ամսօրյա». 1913, էջ 60:

17 Հայերենի իրանական ծագման տեսությունների շրջանը համարվում է 1836—1875 թթ. (տե՛ս Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը. Երևան, 1959, էջ 26):

18 Այս տարեթիվն էլ սկզբնավորում է հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ լինելու տեսությունների շրջանը (տե՛ս Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 37):

հետ։ Անանուխ բառի մասին արմատական բառարանում կարդում ենք՝ «թուի փոխառյալ իրանականից, հմմտ. պրս. nanxāh կամ nanūxēh, «համեմ, արջընդեղ»։ Ինչպես տեսնում ենք հենց արմատական բառարանում բառի ծագումը ստույգ չէ։ Այս կարգի բառերի թիվը կարելի է շարունակել։ Ավելացնենք, որ Աճառյանի ցանկում սրանք իրանական բառեր են համարվում, իսկ Հյուբշմանի բառացանկում տեղ չի գտել միայն սանդալը։

Նման մոտեցումը նկատելի է նաև մի շարք բառերի դեպքում, որոնց հնդեվր. նախաձևից կարող են լինել և՛ իրանական, և՛ հայերեն բառեր, սակայն դրանք նույնպես համարվում են իրանական փոխառություն, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ։ Բերենք մի քանի օրինակներ։ Մանկ||մանգ «խորամանկ»։ Կապվում է պհլ. *mang, պրս. mang «նենգություն» բառի հետ։ Սրանք ծագում են հ.ե. *mang- արմատից, լտ. mango, իռլ. meng «խաբեություն»...։ Հնդեվրոպական *mang-ը հայերենում տալիս է մանկ||մանգ։ Էլ ինչո՞ւ բառը համարել փոխառություն։ Սարեակ-ի պհլ. ենթադրյալ ձևը *sarīk-ն է, որից պրս. sārı, sarıča։ Հայերեն եակ մասնիկը ըստ արմատական բառարանի կարող է իրանական նվազական մասնիկի թարգմանությունը լինել։ Նախ՝ պարզ չէ, եակ-ը այս օրինակում նվազական մասնիկ է, թե՞ բառակազմական սովորական ձևույթ և ապա՝ հյ. սարեակ կարող է ծագած լինել հ.ե. *k̂er, *k̂or, -*k̂r արմատից։ Այս շարքի բառերի մեջ կարելի է նշել ազգ, բանտ և բազում այլ բառեր։ Տրամաբանական չէ այն մոտեցումը, երբ հայերեն համապատասխան բառը իրանական փոխառություն է համարվում լոկ այն բանի համար, որ այդ բառը վկայված է նաև իրանական լեզուներում։ Հայերենի փաստերը այստեղ անտեսվում են. օրինակ, եթե ազգ բառի (հ.ե. azgho «ճյուղ») հօգուտ իրանական ծագման է խոսում պհլ. azg «ճյուղ» վկայությունը, ապա հօգուտ հայերենի կարող է վկայել այն, որ արդեն V դարից բառը գործառում է բազմաթիվ իմաստներով. «տեսակ, կարգ, դաս, ժամանակ, ցեղ, սերունդ, տոհմ...» նաև այն, որ բառը կազմում է 40-ից ավելի բարդություններ։ Այս հարցում բառի իմաստային փոփոխությունների, բառիմաստի զարգացման, բառի հաճախականության գործոնի հաշվառումը նույնպես կարևոր է։

Նկատելի է բառերի ծագման ու փոխառության աղբյուրի ոչ հստակ տարբերակման մի այլ դեպք ևս։ Ագուռ, դրամ, կաղամբ, վարդ, փիղ, շաքար...։ Բառերը իրանական չեն։ Իհարկե, բացառված չէ, որ այս բառերը հայերենին անցած լինեին իրանական լեզուների միջոցով։ Այս դեպքում ինչ-որ չափով արդարանում է սրանք իրանական փոխառություններ դիտելը։ (Թեև բոլոր դեպքերում նպատակահարմարը այս կարգի բառերը բուն իրանական ծագում ունեցողներից տարբերակելն է)։ Հարցը դեռևս այդ մասին չէ։ Եթե վերը բերվածները իրանական փոխառություններ են դիտվում, ապա նույն սկզբունքով իրանական չպետք է համարել այն բառերը, որոնք թեպետ իրանական ծագում ունեն, բայց հայերենին են անցել այլ լեզուներից։ Այսպես, թագ բառը համեմատվում է իրան. *taγ-ի հետ, որը ավանդված չէ։ Բառը, Մեյեի կարծիքով, փոխառված է արամեերենից, որի ապացույցը -թ-ն է։ Եթե կաղամբ-ը իրանական լեզուներից է անցել հայերենին և դրա համար էլ համարվում է իրանական փոխառություն, ապա թագ-ն էլ պետք է համարել սեմական լեզուներից կատարված փոխառություն։ Այստեղ դարձյալ հարցը լուծվել է հօգուտ իրանականի։ Այս խնդրում ևս պետք է հստակություն մտցվի։ Մեր կարծիքով. եթե օտար բառը հայերենում ունի իրանական լեզուներին հատուկ հնչյունական կազմ (երբեմն նաև բառիմաստ), ապա այս դեպքում այն պետք է իրանական փոխառություն համարել։ Իսկ եթե բառը փոխատու լեզվում և իրանականում նույնական է, ապա պետք է համարել փոխառություն այն լեզվից, որի հետ այն կապվում է ծագումնաբանորեն։ Այսպես, ունենք սատրապ և շահապ բառերը։ Առաջինը համարվում է (և դա ճիշտ է) հունական փոխառություն σατράπης, իսկ երկրորդը՝ իրանական. պհլ. sahrap, թեև երկուսի ծագումն էլ իրանական է։ Հունարեն ձևը հպրս. *xšaθrapa, xšaθrapava-ի տառադարձու-

թյունն է (xšaϑra *«թագավորություն, երկիր» և* pā *«պահել»)։* Ագուռ *«աղյուս»-ը սեմական ծագում ունի։ Ավանդված չէ հին և միջին իրանական լեզուներում, կա միայն նոր պարսկերենում* agūr *«աղյուս»։ Սեմական լեզուներում կան* agurru, agūrā *ձևերը։ Ուրեմն նշված բառը պետք է համարել սեմական փոխառություն։*

* * *

Վերը խոսվեց փոխառությունների որոշման ու տարբերակման մի քանի սկզբունքների մասին։ Կարևոր է նաև փոխառությունների լեզվական արժեքի գնահատման հարցը։ Քննությունը ցույց է տալիս, որ փոխառյալ բոլոր բառերը նույն գործառական արժեքը չունեն։ Կան բառեր, որոնք արդեն V դարից կայուն, հաճախական ու բազմիմաստ կիրառություն ունեն, դրանք վաղուց գիտակցվել են որպես հայերեն բառեր, որոնցով կազմվել և կազմվում են նոր բարդություններ (հմմտ. գունդ, թշնամի, նամակ, պահ, սեաւ և այլն)։ Սրանց կողքին կան շատ բառեր, որոնք հայերենում կիրառվել են մեկ-երկու անգամ։ Բերենք այդ կարգի բառերից մի քանիսը[19]*. ապրդում (2, V), ասան (1, VII), բոզպայիտ (1, V), դենպետ (1, V), թուանիկ (1, VII), ղամզայեալ (1, V), նկահ (1, XI), շտրպաղանգ (1, VII), պատգոսապան (1, VII), պարմայել (1, V), սորակալ (2, V), տաստակ (1, V), փուրսիշն (2, V), քեմուխտ (2, V)...։ Մեր հաշվումներով, իրանական փոխառությունների մեջ կան մոտ 130 նման բառեր։ Լեզվաբանական գրականության մեջ օտար ծագում ունեցող բառերը քննելիս առանձնացվում են նաև, այսպես կոչված, «չյուրացված բառերը»։ Վերոհիշյալ բառերը հենց այդպիսիներն են և պետք է տարբերակել սովորական, լեզվում յուրացված փոխառություններից, որոնք լեզվական զգացողության տեսակետից արդեն այլալեզու բառեր չեն հանդիսանում։*

Փոխառությունների մի խումբ էլ արտահայտում է իրանական պետական, կրոնական կյանքին վերաբերող հասկացություններ։ Հասկանալի է, որ V դարի մատենագիրը դրանք չէր կարող թարգմանել հայերեն, և դրա հարկն էլ չկար։ (Հմմտ. դենիմազդեղն, դենպետ, զինդակապետ, համակդեն, մովպետ, շահապ, շարսաղար, պետմոգ, փուշտիպան, փուշտիպանսաղար...)։ Տերմինատիպ և տերմինային բառերի առանձնացումը սովորական բառերից (խոսքն, անշուշտ, փոխառությունների մասին է) ավելի կարժեքավորի փոխառությունների քննությունը։ Ավելին, պետք է առանձնացնել նաև այն բառ-տերմինները, որոնք յուրացվել են մեր լեզվի կողմից, դարձել հայ իրականության համապատասխան կողմերն արտահայտող տերմիններ (հմմտ. բդեշխ, գանձավոր, նախարար, հազարապետ, պարեկ և այլն)։

Լեզվում չյուրացված բառերի մի խումբ են կազմում այն բուսանուններն ու կենդանիների անունները, որոնց հանդիպում ենք VII դարի աշխարհացույցում։ Աշխարհացույցի հեղինակը, նկարագրելով այս կամ այն երկիրը, տալիս է նաև այդ երկրին բնորոշ բույսերի, կենդանիների անունները՝ երբեմն էլ իրանական անվանումներով (հմմտ. բուրճենիկ, դարիճենիկ, գազերբուակ, հոշիբուակ, հրբուակ, նայիբուակ և այլն)։ Պարզ է, որ սրանք նույնպես պետք է առանձնացվեն և դիտվեն որպես փոխառյալ բառերի ուրույն խումբ։ Սրանք մեր լեզվում լայն գործածություն չստացան։

Վերը խոսել ենք անկախաբար չկիրառվող փոխառյալ բառերի մասին։ Ակնհայտ է, որ այդ բառերը ևս ակտիվ գործառություն չունեն, նույնիսկ նրանց լառակապակցելիական հնարավորություններն էլ խիստ սահմանափակ են. օրինակ մարգ *«թռչուն» բառը հանդես է գալիս մի քանի թռչնանունների կազմության մեջ (լորամարգ, սիրամարգ),* պատկան *«նետ»-ը պատկանդարան բարդության մեջ և այլն։ Կարելի է առանձնացնել գործառական նվազ արժեքով փոխառությունների այլ խմբեր։*

---

[19] *Փակագծերում արաբական թվանշանները ցույց են տալիս, թե բառը քանի անգամ է կիրառված, իսկ հռոմեական թվանշանները՝ վկայության ժամանակը ըստ դարերի։*

*Փոխառությունների քննության ժամանակ պետք է կատարել նաև ժամանակային դասակարգումներ, ճշտել բառերի վկայության ժամանակը, դրանց հարաբերությունը։ Հր. Աճառյանի բառացանկում այդպիսի դասակարգում մասնակիորեն առկա է։ Այդտեղ տարբերակված են այն բառերը, որոնք հայերենին են անցել մինչև XI դարը, այլ կերպ ասած, թեև ոչ ճշգրիտ սահմանազատումով՝ առանձնացված են հին և միջին իրանական լեզուներից կատարված փոխառությունները։ Այսպիսի առանձնացումը խիստ անհրաժեշտություն է, բայց պետք է ասել, որ առանձին դեպքերում որոշ կասկածներ է հարուցում։ Խոսքը վերաբերում է հատկապես այդ բառերի՝ հայերենում XII—XV դդ. վկայություններին (*բարկ *«ավան»*, բաճուանդ, բազպան *(XII դար)*, բաշ-բարշ, բղուկ, դաշնակ, դարակել *(XIII դար)*, խարբանդակ, ժաճր, ճոկան *(XIV դար) և այլն։ Ավելի հավանականն այն է, որ այս կարգի բառերը փոխառված լինեին նոր պարսկերենյան շրջանից. իհարկե, բացառված չէ և այն հանգամանքը, որ մի քանիսը հայերենում գործածվում էին ավելի վաղ, բայց գրավոր ավանդվել են միայն հիշյալ շրջաններում։ Այս դեպքում, իրոք, գործ ունենք հին փոխառությունների հետ։ Հստակ չէ և ժամանակային շերտի առանձնացման սահմանագիծը։ Հին և միջին իրանական լեզուների սահմանագիծը պետք է լիներ մինչև IX—X և ոչ թե XI դդ.։*

Անհրաժեշտ է փոխառությունները դասակարգել ըստ դարերի՝ նկատի առնելով հայոց լեզվում նրանց վկայության ժամանակը։ Բնականաբար, այդ առանձնացումը պետք է կատարել, առաջին հերթին, հայոց լեզվի գրաբարյան փուլի համար, այսինքն մինչև XI դարը[20]։ Այս շրջանը ավելի կարևոր է, որովհետև ընդգրկում է նաև նախագրային շրջանից անցած փոխառությունները։ Նոգրաբարյան շրջանում կատարված փոխառությունները հիմնականում նոր պարսկերենից են, դրանք որպես կանոն պատկանում են բարբառային, ժողովրդախոսակցական ոճին ու չեն մտնում գրական նորմայի մեջ։

Քննությունը ցույց է տալիս, որ փոխառությունների գերակշիռ մասը վկայված է V դարում։ Տեղի սղության պատճառով այդ բառերը այստեղ չենք բերում։ VI դարից վկայություն չունենք (այդ դարից մատենագրական հարուստ ժառանգություն չկա)։ Ստորև բերում ենք ըստ մյուս դարերի կատարված փոխառությունները.

VII դար. աթաշ, ախտար, ահոկ, անազարմ, անջիման, ապախտար, ապաղարէ, ապրայոյզ (?), ապրիշում, ասան, բահլիկ, բամբակ, բան (բույս է), բէշկ, մշկոյ, բուրճենիկ, բրինձ, գազերբուակ, գազպէն, գոյիբուակ, գոհար, դանդան, դարապաս, դարիճենիկ, դեհ, երաստ, զառիկ, ըստօրակ, թուանիկ, լատան, խիշտ, խորաւարան, համավար, համագունակ, հոշիբուակ, հրբուակ, ճամբար «մանյակ», ճանդան, ճարակ «նահանգ», մուշկ, յետկար, նայիբուակ, նափակ, նուենդ, շահդանակ, շահուար, շահրմար, շարաւանդ, շաքար, շտրպադանդ, պայմաննամակ, պատգոսապան, պէշոպայ, պիստակ, սնգրուեղ, սպուժել, վաճառգահ, վանկ (բարդության մեջ), վասպուրական «ազնվական», վղենակ, փաղանգամուշկ, փարուազ «ժապավեն», քանդուկ, քափուր «դեղ»։

VIII դար. անխուէշքարէ, պարտակ, վարզ.

IX դար. աւանդ «գլխավոր քաղաք», կոհակ, շահան (շահ), շահրիկ, ռահ, սոլասալար, վատմիհր։

X դար. գահնամակ, խոստակ, ճուռակ.

XI դար. աշդահակ, բզաք, գաւազ, երաշխ «աշխետ», ժժան, լական, մատեան «էգ ձի», նկահ, շիփ, ոստադես, վերմակ, փալանիկ, քաշտի[21]։

---

20 *Ըստ Գ. Ջահուկյանի շրջանաբաժանման, հին հայերենյան կամ գրաբարյան փուլը ընդգրկում է V—XI դդ. (տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի զարգացման փուլերը. Երևան. 1964, էջ 34)։*

21 *Այս ցանկում զետեղված են նաև այն բառերը, որոնք, մեր ըմբռնմամբ, ըստ նախորդ էջերում շարադրված սկզբունքների, կարելի է փոխառություն չհամարել։*

Կան դեպքեր, երբ բառը վկայված է ուշ շրջանից, իսկ նրանով կազմված բարդությունը՝ ավելի վաղ: Օրինակ ռահ «ճանապարհ» (IX դար), ռահվիրայ (V դար): Կարելի է կարծել, որ ռահ-ն էլ գործածվել է V դարում, բայց ավանդված չէ, իսկ ավելի հավանականն այն է, որ ռահվիրայ բարդությունը ամբողջապես փոխառյալ է իրանականից և բարդության բաղադրիչները առանձին-առանձին չեն գիտակցվել: Բառը լայն կիրառություն չուներ V դարում. օգտագործել է միայն Բուզանդը. «Բայց միայն սակաւ սպասաւորօք հանդերձ և որսոցն պառականօք և ռահվիրայ մարդկանն»[22]:

Դաստ-ը նույնպես ավանդված չէ, իսկ նրանով բարդված ձևեր շատ կան՝ դաստակ, դաստակերտ, դաստապան, դաստառակ...: Մեր կարծիքով, հենց V դարում դաստ գիտակցվել է որպես օտար բառ: Մ. Խորենացին դաստակերտ-ի հետ օգտագործում է ձեռակերտ համանիշը. «Քաղցր է ինձ ասել և լսողացդ գեղեցիկ դաստակերտին Երուանդաշատի», «Վասն ձեռակերտի որ կոչի Երուանդակերտ»[23]: Նշանակում է իրանական կերտ-ը V դարի հեղինակը ընկալում էր որպես հայերեն, իսկ դաստ-ը՝ ոչ:

Երբեմն հնարավոր չէ պարզել բառերի սկզբնական վկայության կոնկրետ ժամանակաշրջանը: Կան գրքեր, որոնք գրվել կամ խմբագրվել են տարբեր դարերում (Գիրք վաստակոց, Վարք հարանց, կանոնագրքեր... և այլն): Ահա մի շարք բառեր, որոնց վկայությունը ճշտել հնարավոր չէ. ասպանդակ, արբոն, բուման, գրտակ, զենակար, կանկար, համոսն, մարզպան (չափ է), նաճառ, պահէզ, պադան, սմպատակ, սոնիճ, քաշիկ և այլն: Ներքոհիշյալ բառերն էլ ավանդված են միայն բառարաններում՝ առանց վկայության. դարապղպեղ, դափ, դոճ, ժիրակ, համսայեակ, ճամբարակ, կակժիրակ, կարոս, նաւթկյան, նարմ, շահթառակ, ստւճ, վրին...: Նկատելի է, որ հատկապես V դարից վկայված բառերն են, որոնք մտել են մեր լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ, հետագա դարերից վկայվածները (այդպիսիք կան և V դարից) մեծ մասամբ գործածական նվազ արժեք ունեցող բառեր են:

ОБ ИРАНСКИХ ЗАИМСТВОВАНИЯХ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Л. Ш. АВАНЕСЯН

(Резюме)

В течение многих веков иранские языки оказывали ощутимое влияние на армянский язык. Основные вопросы, связанные с иранскими заимствованиями (этимология, определение фонетических соответствий и первоисточников заимствованных слов), всегда были в центре внимания арменистов. Происхождение большинства слов, считающихся иранскими, достаточно обосновано. Однако обильный материал выдвигает новые вопросы, новые принципы исследования, некоторые уточнения. Иногда смешиваются заимствованный корень и армянские образования от этого корня (ապաշխ-ար-ել, ժոյժ=զ-ոյժ и др.). Не следует считать заимствованиями и сложные слова, один из компонентов которых является армянским. Заимствованиями не должны считаться также те члены омонимической пары, которые известны только в армянском; например, բազուկ (1) «рука» и բազուկ (2) «свекла»: последнее есть только армянское слово. Некоторые слова (բանտ, մանգ, սարիկ) можно непосредственно возвести к индоевропейской праформе, они считаются иранскими лишь потому, что употребляются и в иранском. При исследовании заимствований важно выявить их функциональную роль. Приблизительно 130 иранских слов имеют очень низкую частотность употребления (1—2 раза). Это так называемые «неосвоенные» слова. Большинство заимствований засвидетельствованы с V в.

22 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 43:

23 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 167: